*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի*
*2021թ. հոկտեմբերի 29-ի թիվ 285-Ա որոշմամբ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


I. ԱՄՓՈՓԱԳԻՐ...8

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ...10

III. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 12

1. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում 2021 թվականի վեց ամիսների ընթացքում ձեռքբերված առողջապահական և լաբորատոր նյութերի վերաբերյալ...12

2. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից 2021 թվականի վեց ամիսների ընթացքում ներկայացված հաշվետվությունների քանակային /արդյունքային/ ցուցանիշների վերաբերյալ...18

3. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում Վարկառուների կողմից ներկայացված վարկերի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվությունների արժանահավատության վերաբերյալ / ձև N 1/...20

4. 1022-12001՝ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում վարկառու տնտեսվարողների վարկային միջոցների նպատակային օգտագործման մոնիթորինգի վերաբերյալ...24

5. 1022-12004՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում...26

6. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող

վարկերի շրջանակներում վարկառուների և ֆերմերների միջև կնքված պայմանագրերի վերաբերյալ........................................................................29

7. 1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում իրականացվող մոնիթորինգի վերաբերյալ........................................................................30

8. 1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում Նախարարության և ՖԿ-ների միջև կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման վերաբերյալ........................................................................31

9. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակներում Նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ........................................................................33

IV. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ........................................................................35

10. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից 2021 թվականի վեց ամիսների ընթացքում ներկայացված հաշվետվությունների քանակային /արդյունքային/ ցուցանիշների վերաբերյալ........................................................................35

11. 1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում ներկայացված հաշվետվության վերաբերյալ........................................................................36

12. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակներում Նախարարության աշխատակիցների պարգևատրման վերաբերյալ........................................................................38

V. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ........................................................................41

13. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր 1022-12001........................................................................41

13.1 «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» Ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ..42

**13.2 Վարկառու տնտեսվարողներ սուբյեկտների կողմից վարկային միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ ........................ 42**

**14. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում շահառուների և ֆերմերների միջև կնքված պայմանագրային դրույթների կատարման վերաբերյալ ........................ 44**

VI. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ........................ 46

| | |
|---|---|
| Հաշվեքննության հիմքը | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 214-Ա որոշում: |
| Հաշվեքննության օբյեկտը | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն: |
| Հաշվեքննության առարկան | 2021 թվականի վեց ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն: |
| Հաշվեքննության չափանիշները | 1. ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում,<br>2. ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի վեց ամիսների կատարողականի վերաբերյալ հաշվետվություն,<br>3. «Գնումների մասին» ՀՀ օրենք,<br>4. ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշում,<br>5. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք,<br>6. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք,<br>7. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,<br>8. Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրեր և այլն: |
| Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը | 2021 թվականի հունվարի 1–ից մինչև 2021 թվականի հունիսի 30–ը: |
| Հաշվեքննության կատարման ժամկետը Զննում և Դիտարկում | 2021 թվականի սեպտեմբերի 6–ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 31-ը:<br>2021 թվականի սեպտեմբերի 13-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 15-ը: |
| Հաշվեքննության մեթոդաբանությունը | Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն: |

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում[1]**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Գեղամ Հովեյանը:

[1] Տվյալ հաշվեքննություն իրականացրած պաշտոնատար անձինք հաջորդիվ իրականացնելու են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2021 թվականի պետական բյուջեի, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություն

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|---|---|
| **ՖԿ** | Ֆինանսավորող կառույց՝ առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները: |
| **ԳՖԿ** | Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղատնտեսական ֆինանսավորման կառույցը: |
| **ՀԱԲԼԾԿ** | «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ: |
| **ԳԾԿ** | «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ |

# I. ԱՄՓՈՓԱԳԻՐ[2]

2021 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակում իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության / այսուհետ՝ Նախարարություն/ վեց ամիսների բյուջեի կատարողականի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ: Ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար: Ստորև հաշվեքննությամբ արձանագրված հիմնական փաստերն են:

***1116-11001 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ոլորտում*** առկա են անհամապատասխանություններ կապված Դաբաղ և Ծաղիկ պատավաստանյութերի ձեռքբերման համար գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասով կապված պատվաստանյութերի ձեռքբերման գնի հետ /գնային առաջարկի գումարը ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի հետ միասին/, որը գերազանցել է գնման հայտով սահմանված ֆինանսական միջոցները: Ինչպես նաև առկա է անհամապատասխանություն և խեղաթյուրում կապված նմուշառումներ կատարող և լաբորատոր փորձաքննություններ իրականացնող կազմակերպությունների կողմից արդյունքային ցուցանիշների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների հետ:

***1022-12004 Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում միջոցառման*** գծով առկա են անհամապատասխանություններ կապված վարկերի մայր գումարների վճարման համար արտոնյալ ժամկետների տրամադրման և կնքված պայմանագրերի դրույթների հետ, վարկառուների կողմից վարկի ստացման համար ֆինանսական կազմակերպությանը ներկայացված ֆերմերների հետ կնքված պայմանագրերի ցանկի և կնքված պայմանագրերով փաստացի մթերված քանակների միջև, ինչպես նաև ֆերմերներին պատկանող անասնագլխաքանակների վերաբերյալ ներկայացված տեղեկատվության տարբերությունների մասով:

---

[2] Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվեքննության արդյունքներն արձանագրվել և ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունն ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում համաձայնության դեպքում ստորագրում է այն կամ գրավոր ներկայացնում է առարկություններ և բացատրություններ: Հաշվեքննության օբյեկտի կողմից արձանագրության վերաբերյալ արձագանք չի ներկայացվել:

***1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ոլորտում*** առկա է խեղաթյուրում կապված Նախարարության կողմից տրված պարգևավճարների, ինչպես նաև հսկողության գործընթացի թերացում կապված թափուր հաստիքների հետ:

***1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում ոլերտում*** առկա է անհամապատասխանություն և հսկողական գործընթացի թերացում կապված ծրագրով նախատեսված մոնիթորինգի իրականացման, պարտավորությունների կատարման, Նախարարության և ՖԿ-ների հետ կնքված պայմանագրերի մասով, ինչպես նաև առկա է խեղաթյուրում կապված պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացված փաստացի ծախսի մասով:

***1022-12001 Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ոլորտում*** առկա է անհամապատասխանություն կապված հաշվետվությունների ներկայացման հետ:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական անհամաապտասխանություններ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 1-ից 9-րդ կետերում, որոնք համատարած չեն, սակայն միասին վերցված էական են ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 10-12-րդ կետում, որը համատարած չեն, սակայն էական է ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Գեղամ Հովեյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
2021 թվական, հոկտեմբերի 29
ՀՀ հաշվեքննիչ պալատ, Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի*
*2021թ. հոկտեմբերի 29-ի թիվ 285-Ա որոշմամբ*

# II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2021 թվականի վեց ամիսներ

հազ.դրամ

| | Ծրագիր | Տարեկան ճշտված պլան | Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան | Ֆինանսավորում | Փաստ | Փաստացի ծախս |
|---|---|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 35,104,396.31 | 20,250,380.01 | 14,699,519.09 | 14,145,528.68 | 13,909,151.87 |
| 1015 | Սոցիալական փաթեթների ապահովում | 36,864.00 | 14,130.00 | 12,243.00 | 12,243.00 | 12,243.00 |
| 1022 | Գյուղատնտեսության խթանման ծրագիր | 6,653,802.60 | 4,047,623.60 | 3,824,460.05 | 3,818,503.80 | 3,836,165.55 |
| 1026 | Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ | 165,842.90 | 70,037.40 | 42,507.20 | 42,507.20 | 51,667.80 |
| 1058 | Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ | 2,309,700.91 | 1,012,459.31 | 902,916.08 | 873,871.84 | 968,068.40 |
| 1059 | Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն | 291,876.00 | 99,539.70 | 71,340.84 | 71,340.84 | 90,756.66 |
| 1067 | Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում | 30,803.40 | 13,861.50 | 12,389.40 | 12,389.40 | 12,389.40 |
| 1086 | Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում | 3,902,456.60 | 1,811,931.60 | 908,587.51 | 870,928.71 | 909,368.05 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1104 | Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը | 183,120.00 | 76,361.00 | - | - | - |
| 1116 | Անասնաբուժական ծառայություններ | 2,142,818.70 | 1,367,821.60 | 1,198,879.65 | 1,198,879.65 | 844,032.34 |
| 1134 | Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն | 1,727,760.30 | 1,263,061.00 | 517,330.66 | 519,875.03 | 565,765.03 |
| 1162 | Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր | 210,156.20 | 92,603.30 | 92,603.30 | 92,603.30 | 98,770.70 |
| 1165 | Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր | 1,017,754.60 | 482,477.30 | 248,496.56 | 248,496.56 | 280,478.16 |
| 1187 | Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր | 2,906,248.30 | 1,426,516.30 | 1,213,264.61 | 1,213,264.61 | 1,060,942.11 |
| 1190 | Ջրաաշրջության զարգացման ծրագիր | 7,607,994.90 | 3,467,759.50 | 1,731,955.98 | 1,248,604.41 | 1,252,890.34 |
| 1224 | Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր | 5,008,966.70 | 4,095,966.70 | 3,844,143.05 | 3,843,619.13 | 3,843,619.13 |
| 1230 | Ռազմական դրության պայմաններում քաղաքացիների կյանքի ու անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր | 908,230.20 | 908,230.20 | 78,401.20 | 78,401.20 | 81,995.20 |

*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի*
*2021թ. հոկտեմբերի 29-ի թիվ 285-Ա որոշմամբ*

# III. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

## 1. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում 2021 թվականի վեց ամիսների ընթացքում ձեռքբերված առողջապահական և լաբորատոր նյութերի վերաբերյալ

***Առկա է անհամապատասխանություն ՀՕ-195 օրենքի 1-ին հոդվածի մասով:***

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի վեց ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4266 տնտեսագիտական հոդվածով՝ Առողջապահական և լաբորատոր նյութեր 2021 թվականի հաստատված տարեկան պլանով նախատեսվել է 319,635.20 հազ. դրամ: Այնուհետև, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 26-ի թիվ 648-Ն որոշման համաձայն նախատեսված գումարը ավելացվել է 50,308.80 հազ. դրամով և տարեկան ճշտված պլանը կազմել է 369,944.00 հազ. դրամ:

2021 թվականի վեց ամիսների ընթացքում Նախարարության կողմից ձեռք է բերվել 366,342.10 հազ. դրամի առողջապահական և լաբորատոր նյութեր: Արձանագրությանը կից Հավելված 1-ով ներկայացված է 2021 թվականի վեց ամիսների ընթացքում Նախարարության կողմից կազմակերպված գնման գործընթացների արդյունքում ձեռքբերված «Առողջապահական և լաբորատոր նյութերը»:

2021 թվականի հունվարի 29-ին Նախարարությունը՝ «Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ՝ բազմավալենտ, սորբինացված, կուլտուրալ, ակտիվազրկված պատվաստանյութ դաբաղի վիրուսի A Իրան 2005 և AG-VII, O Պան Ասիա-2, Ասիա 1, Sindh-08 տիպերի դեմ պատվաստանյութի» /այսուհետ՝ Դաբաղ/ պատվաստանյութի ձեռքբերման նպատակով, կազմակերպել է ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-21/04 ծածկագրով գնման ընթացակարգ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի

/Այսուհետ՝ ԳՄ Օրենք/ 15-րդ հոդվածի, 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն, այն է՝ «Ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է»: Նախահաշվային գին է սահմանվել 247,293.87 հազ. դրամ, 3,410 950 մլ պատվաստանյութի համար, որի մեկ միավորի արժեքը կազմել է 72.5 դրամ: Մրցույթին մասնակցել է «Ինովատոր» ՍՊԸ-ն, որի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 346,211.46 հազ.դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/, որը գերազանցել է բյուջեով նախատեսված գինը: Արդյունքում, գնման ընթացակարգը համարվել է չկայացած:

2021 թվականի փետրվարի 3-ին Նախարարությունը ՝ «Անասնաբուժության մեջ կիրառվող մանր եղջերավոր կենդանիների ծաղիկի և խոշոր եղջերավոր կենդանիների հանգուցավոր մաշկաբորբի ասոցացված կուլտուրալ, չոր, վիրուսային պատվաստանյութի» /այսուհետ՝ Ծաղիկ/ ձեռքբերման նպատակով, կազմակերպել է ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/05 ծածկագրով գնման ընթացակարգ՝ ԳՄ Օրենքի 15-րդ հոդվածի, 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն: Նախահաշվային գին է սահմանվել 29,831.87 հազ. դրամ, 2.386.550 մլ պատվաստանյութի համար, որի մեկ միավորի արժեքը կազմել է 12.5 դրամ : Մրցույթին մասնակցել է «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖԲՊԿ-ն, որի ներկայացած գնային առաջարկը կազմել է 35,798.25 հազ.դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/, որը գերազանցել է բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները: Արդյունքում, գնման ընթացակարգը համարվել է չկայացած: Այնուհետև, Նախարարությունը Ծաղիկ պատվաստանյութի ձեռքբերման նպատակով 2021թ.-ի մարտի 10-ին հայտարարել է ևս մեկ մրցույթ՝ ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/05/1 ծածկագրով: Մրցույթին մասնակցել է «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը կազմել է 35,559.59 հազ.դրամ՝ գերազանցելով բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները: Արդյունքում, գնման ընթացակարգը համարվել է չկայացած:

Նախարարությունը, հիմնավորմամբ դիմել է ՀՀ Կառավարությանը՝ Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի գնման նպատակով հրատապության հիմքով մեկ անձից գնում կատարելու և լրացուցիչ գումար պահանջելու համար: Նախարարությունը որպես հրատապության անհրաժեշտություն ներկայացրել է ժամկետի սղությունը: Նախարարության կողմից հիմնավորման մեջ ներկայացվել է նաև լրացուցիչ գումարի պահանջ՝ կապված Արցախի Հանրապետությունից շուրջ 10,000 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիների ՀՀ ներմուծման հետ, ինչպես նաև

համապատասխան գնի մեջ ԱԱՀ-ի գումար չնախատեսելու հետ, որը հետևանք է «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքում /այսուհետ՝ ՀՕ-195 օրենք/ կատարված փոփոխության: Հարկ է նշել, որ ՀՕ-195-ի փոփոխությունը կատարվել է 2019թ.-ի հունիսի 25-ին և ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 1-ից, որի մասին Նախարարությանը լրացուցիչ տեղեկացվել է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից դեռևս 2020 թվականի մայիս ամսին: **Հետևաբար, առկա է անհամապատասխանություն** ՀՕ-195 օրենքի 1-ին հոդվածի մասով:

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 26-ի N 648-Ն որոշմամբ Նախարարությանը թույլատրվել է Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով իրականացնել հրատապության հիմքով մեկ անձից գնում և հատկացվել է 50,308,72 հազ.դրամ լրացուցիչ գումար:

Նախարարությունը 2021 թվականի ապրիլի 28-ին կազմակերպել է ՀՀ ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-35 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ՝ Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով: Դաբաղի նախահաշվային գին է սահմանվել 291,636.22 հազ. դրամ և Ծաղիկի՝ 35,798.25 հազ. դրամ: Մրցույթին մասնակցել է «Ինովատոր» ՍՊԸ-ն, «Սոնետ» ՍՊԸ-ն և «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն:

Ծաղիկի մասով գնային առաջարկներ են ներկայացրել «Սոնետ» ՍՊԸ-ն՝ 51,549.48 հազ.դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/ և «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն՝ 34,819.76 հազ.դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/: Արդյունքում, հաղթող է ճանաչվել «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է պայմանագիր:

Դաբաղի մասով գնային առաջարկ է ներկայացրել միայն «Ինովատոր» ՍՊԸ-ն՝ 346,211.46 հազ.դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/, որը գերազանցել է նախատեսված ֆինանսական միջոցները: Արդյունքում, գնման ընթացակարգը Դաբաղի մասով համարվել է չկայացած:

Սակայն, հարկ է նշել, որ 2021 թվականի մարտի 19-ի թիվ 16-01/2318 գրությամբ «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖԲՊԿ-ն ի պատասխան Նախարարության դիմումի ներկայացրել է գնային առաջարկ մեկ անձից գնման համար: Ըստ ներկայացված գնային առաջարկի 1 մլ Դաբաղ պատվաստանյութի համար առաջարկել է 71,25 դրամ /2020 թվականին առաջարկված գնին հավասար/, որը ԱԱՀ-ի հետ միասին կազմում է 85,5 դրամ:

Ընդհանուր գինը 3,410,950 մլ համար կազմել է 291,636.22 հազ. դրամ, որից ԱԱՀ-ն կազմում է 48,615.75 հազ.դրամ:

Այսպիսով, «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖԲՊԿ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը համապատասխանում է պետական բյուջեով Դաբաղ պատվաստանյութի ձեռքբերման համար նախատեսված ֆինանսական միջոցներին, սահմանված քանակի պատվաստանյութի ձեռքբերման պայմաններով:

Սակայն, Նախարարությունը հաշվի չառնելով վերոգրյալը կրկին դիմել է ՀՀ Կառավարությանը հիմնավորմամբ՝ Դաբաղ պատվաստանյութի գնման նպատակով հրատապության հիմքով մեկ անձից՝ «Ինովատոր» ՍՊԸ-ից գնում կատարելու և պատվաստանյութի քանակը կրճատելու համար՝ միաժամանակ անփոփոխ թողնելով նախատեսված ֆինանսական միջոցները: Այսպիսով, Նախարարությունը, ՀՀ ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-35 ծածկագրով գնման ընթացակարգից հետո, գնային առաջարկ ստանալու հիմքով ևս երկու անգամ դիմել է «Ինովատոր» ՍՊԸ-ին ստանալով նոր գնային առաջարկ՝ 3,410,950մլ Դաբաղ պատվաստանյութի համար 330,357,36 հազ.դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/ և միավորի գին՝ 96,8 դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/: Արդյունքում, Նախարարությունը հիմնավորման մեջ ներկայացրել է միայն «Ինովատոր» ՍՊԸ-ի գնային առաջարկը և պատճառաբանելով, որ «վերահաշվարկի արդյունքները կբավարարեն ապահովել կայուն անասնահամաճարակային իրավիճակ՝ առաջարկել է ՀՀ կառավարությանը ձեռք բերել 3,410,950 մլ-ի փոխարեն 3,012,770 մլ Դաբաղի պատվաստանյութ՝ միաժամանակ նշելով, որ լրացուցիչ չափաքանակի ձեռքբերման անհրաժեշտության դեպքում կներկայացվի որոշման նոր նախագիծ: Նախարարության հիմնավորման հիման վրա ՀՀ կառավարության կողմից 2021 թվականի մայիսի 13-ին ընդունվել է N 791-Ն որոշումը:

2021 թվականի մայիսի 31-ին Նախարարությունը «Ինովատոր» ՍՊԸ –ի հետ կնքում է ՀՀ ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-39-187-21 ծածկագրով պայմանագիրը՝ 291,636.13 հազ.դրամ գումարով /ներառյալ ԱԱՀ-ն/՝ ձեռքբերելով 3,012,770 մլ Դաբաղ պատվաստանյութ: Այսպիսով, ձեռքբերված Դաբաղ պատվաստանյութի միավորի գինը՝ առանց ԱԱՀ, կազմել է 80,66 դրամ, որը 9,41 դրամով գերազանցում է նախորդ տարվա միավորի գինը: Ընդ որում, հարկ է նշել, որ 2020 թվականին պատվաստանյութը գնվել է արտադրող կազմակերպությունից, իսկ 2021 թվականին՝ միջնորդ կազմակերպությունից: Այսինքն՝ 2021 թվականին Դաբաղ

պատվաստանյութը 2020 թվականի համեմատ ձեռք է բերվել, ընդհանուր առմամբ, **34,020.19 հազ.դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/ / (9,41*3,012,770)+20%/** ավելի թանկ գնով: Հաշվեքննությամբ պարզվել է, որ միջնորդ կազմակերպությունը՝ «Ինովատոր» ՍՊԸ-ն, Դաբաղ պատվաստանյութը ձեռք է բերել ՌԴ «Շչոլկովոյի բիոկոմբինատ» ԴՊՁ-ից, որի համար վճարվել է 388,651.20 ԱՄՆ դոլար, 1 մլ-0,129 ԱՄՆ դոլար համարժեք 63,21 դրամ, /1 ԱՄՆ դոլար - 490 դրամ/, կամ Նախարարությանը հանձնված նույն պատվաստանյութի միավորի գնի և «Ինովատոր» ՍՊԸ–ի կողմից ձեռքբերման գնի տարբերությունը կազմում է 20,94 դրամ /ներառյալ ԱԱՀ/, ընդհանուր քանակի համար տարբերությունը կազմում է 63,099.84 հազ. դրամ, որից ԱԱՀ-ն՝ 10,518.74 հազ.դրամ:

Այսպիսով, 2019-2021թթ. ընթացքում, Նախարարության կողմից Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման վերլուծությունից պարզվել է, որ նշված տարիներին պատվաստանյութերը վերջնական գնվել են մեկ անձից: Մասնավորապես նշված ժամանակահատվածում հրատապության հիմքով մեկ անձից ձեռքբերումների պատճառ են հանդիսացել մասնակիցների կողմից ներկայացված նախահաշվային գնից բարձր գնային առաջարկները, որոնք ըստ էության ներառել են պատվաստանյութի արժեքից բացի նաև ԱԱՀ-ի գումարը, որը չի նախատեսել և հաշվի չի առել Նախարարությունը: **Հետևաբար, չկայացած մրցույթները և հետագայում համապատասխան որոշումների կայացումը հանգեցրել է պատվաստանյութերի ձեռքբերման ժամկետների երկարաձգման և մեկ անձից գնման հրատապության՝ կապված անասնահամաճարակային իրավիճակի կայունության ապահովման հետ: Հարկ է նշել, որ կազմակերպված մրցույթներին հիմնականում մասնակցել են այն կազմակերպությունները, որոնց հետ կնքվել է մեկ անձից գնման պայմանագրեր:**

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացվում է 2019-2021թթ.-ի ընթացքում Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերումը՝ ըստ տարիների, ձեռքբերման գների և քանակների:

**2019-2021 թթ. ընթացքում 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում մեկ անձից կատարված գնումների վերաբերյալ**

**Աղյուսակ 1**

| Հ/Հ | Պատվաստանյութի անվանումը | Ձեռքբերման տարեթիվը | Մասնակից կազմակերպության անվանումը | Միավորի գինը/դրամ/ | | Քանակը /մլ/ | Գումարը այդ թվում՝ ԱԱՀ-ն /հազ.դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | առանց ԱԱՀ | Այդ թվում ԱԱՀ | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Դաբաղ | 2019 | «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ | 70.5 | | 4,061,900 | 292,146.08 |
| | | 2020 | «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ | 71.25 | 85.5 | 3,121,000 | 266,845.50 |
| | | 2021 | «Ինովատոր» ՍՊԸ | 80.66 | 96.8 | 3,012,770 | 291,636.10 |
| 2 | Ծաղիկ | 2019 | «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ | 12.5 | | 2,457,450 | 30,718.13 |
| | | 2020 | «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ | 12.5 | 15 | 3,618,850 | 54,282.70 |
| | | 2021 | «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍԸ | 12.16 | 14.59 | 2,386,550 | 34,819.70 |

Համաձայն 2021 թվականի վեց ամիսների համար ԳԾԿ-ի կողմից Նախարարությանը ներկայացված 1116-11001 միջոցառման շրջանակներում «Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ» հաշվետվության ձև Հ-8-ի, ԳԾԿ-ի կողմից պակաս է իրականացվել 326,087 հատ /652,174 մլ/ կանխարգելիչ միջոցառում, որը արդյունք է պատվաստանյութի ուշ մատակարարման:

**Այսպիսով, Նախարարության կողմից Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման գործընթացում առկա են պլանային և կատարողական ցուցանիշների միջև անհամապատասխանություններ և հսկողական գործընթացի թերացումներ: Վերոնշյալը հանգեցրել է 2019-2021թթ ընթացքում նշված պատվաստանյութերի հրատապության հիմքով մեկ անձից գնմանը, պատվաստանյութերի ուշ մատակարարմանը և արդյունքում 2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Դաբաղ պատվաստանյութի գծով 326,087 հատ /652,174 մլ/ պակաս հակադաբաղային միջոցառման իրականացմանը: 2021 թվականին Դաբաղ պատվաստանյութը մեկ անձից՝ միջնորդ կազմակերպությունից գնելու հետևանքով, Նախարարությանը**

**մատակարարված ապրանքի գինը գերազանցել է արտադրող կազմակերպության վաճառքի գնին, որը կազմել է 63,099.84 հազ. դրամ:**

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմի արձագանք չի ներկայացվել:

***Եզրակացություն***

2021 թվականին Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի համար կազմակերպված գնման ընթացակարգերը համարվել են չկայացած: Նախարարությունը, հիմնավորմամբ դիմել է ՀՀ Կառավարությանը՝ Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի գնման նպատակով հրատապության հիմքով մեկ անձից գնում կատարելու և լրացուցիչ գումար պահանջելու համար: Հիմնավորման մեջ նաև նշելով ԱԱՀ-ի համար գումարի պահանջը: **Հետևաբար, առկա է անհամապատասխանություն** ՀՕ-195 օրենքի 1-ին հոդվածի մասով: Միևնույն ժամանակ պատվաստանյութերի ուշ մատակարարման հետևանքով 326,087 հատ /652,174 մլ/ կանխարգելիչ միջոցառում պակաս է իրականացվել:

**Նախարարության կողմից Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման գործընթացում առկա են պլանային և կատարողական ցուցանիշների միջև անհամապատասխանություններ և հսկողական գործընթացի թերացումներ: Վերոնշյալը հանգեցրել է 2019-2021թթ ընթացքում նշված պատվաստանյութերի հրատապության հիմքով մեկ անձից գնմանը, պատվաստանյութերի ուշ մատակարարմանը և արդյունքում 2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Դաբաղ պատվաստանյութի գծով 326,087 հատ /652,174 մլ/ պակաս հակադաբաղային միջոցառման իրականացմանը: 2021 թվականին Դաբաղ պատվաստանյութը մեկ անձից՝ միջնորդ կազմակերպությունից գնելու հետևանքով, Նախարարությանը մատակարարված ապրանքի գինը գերազանցել է արտադրող կազմակերպության վաճառքի գնին, որը կազմել է 63,099.84 հազ. դրամ:**

## 2. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից 2021 թվականի վեց ամիսների ընթացքում ներկայացված

**հաշվետվությունների քանակային /արդյունքային/ ցուցանիշների վերաբերյալ**

<u>*Կրկնվող կետ*</u>

***Առկա է անհամապատասխանություն Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-30.06.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների միջև:***

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի վեց ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 631,176.90 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 631,176.82 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 538,603.50 հազ. դրամ:

Համաձայն ԳԾԿ-ի կողմից Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-30.06.2021թ. ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվության՝ հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանով նախատեսվել է իրականացնել 455,360 հատ բրուցելյոզի նմուշառում, փաստացի կատարվել է 475,984 հատ նմուշառում: Հաշվետու ժամանակահատվածի փաստացի և պլանային ցուցանիշների տարբերությունը կազմել է 20,624 հատ, որը կազմակերպության կողմից պարզաբանվել է կայուն համաճարակային իրավիճակի պահպանմամբ՝ կատարվել են նախատեսվածից շատ ախտորոշման միջոցառումներ: ՀԱԲԼԾԿ-ի կողմից Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-30.06.2021թ. ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվության, իրականացվել է 502,326 հատ լաբորատոր փորձաքննություն, որից 491,184 հատ բրուցելյոզի փորձաքննություն, որից բրուցելյոզ հիվանդության կասկածով մարզային ստորաբաժանումներից կենտրոնական լաբորատորիային տրամադրված նմուշների քանակը կազմում է 5643 հատ: Այսպիսով, 01.01.2021-30.06.2021թ. ժամանակահատվածի համար ըստ ներկայացված հաշվետվությունների բրուցելյոզի ախտորոշման գծով ԳԾԿ-ի կողմից ներկայցված նմուշառումների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների տարբերությունը կազմում է 9,477 հատ, հաշվի առնելով 5643

հատ կենտրոնական լաբորատորիայի փորձաքննությունները /491,184-475,984-5,643/, որը գումարային արտահայտությամբ կազմում է 3,053,40 հազ.դրամ /9,477*322.19/:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմի արձագանք չի ներկայացվել:

## 3. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում Վարկառուների կողմից ներկայացված վարկերի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվությունների արժանահավատության վերաբերյալ / ձև N 1/

***Առկա է անհամապատասխանություն վարկառուների կողմից ներկայացված վարկերի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող փաստացի կենդանիների գլխաքանակների միջև:***

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով «Միլկաթ» ՍՊԸ-ին և «Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ-ին վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող վարկառուների կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/՝ այն համադրվել է ֆերմերների համայնքների ղեկավարների կողմից տրամադրված «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» արտացոլված տեղեկության հիման վրա տրամադրված տեղեկանքների հետ, ինչպես նաև «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» տվյալների հիման վրա տվյալ տարածաշրջանի անասնաբույժի կողմից տրված տեղեկանքների հետ: Արդյունքում, պարզվել է որ ներկայացված տեղեկատվության մեջ առկա են որոշակի անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Ինեկոբանկ» ՓԲԸ-ի և «Միլկաթ» ՍՊԸ-ի միջև 24.05.2021թ. կնքվել է վարկային թիվ IF21/00027 պայմանագիրը գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով 40,000.00 հազ. դրամ գումարի չափով:

**Աղյուսակ 2**

| Հ/Հ | Մթերք վաճառող | ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվություն | | ըստ համայնքի ղեկավարի և ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքի | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| | | կովերի գլխաքանակ /գլուխ/ | մթերված կաթի քանակ /լիտր/ | կովերի գլխաքանակ /գլուխ/ | |
| 1 | Տ.Ո. | 70 | 30000 | 8 | Ծանոթություն 1 |
| 2 | Ռ.Հ | 80 | 62000 | 0 | Ծանոթություն 2 |
| 3 | Ա.Հ. | 90 | 50000 | 0 | Ծանոթություն 3 |
| 4 | Դ.Հ. | 90 | 50000 | 68 | Ծանոթություն 3 |
| 5 | Ռ.Ու | 30 | 20000 | 27 | Ծանոթություն 4 |
| 6 | Գ.Ս. | 40 | 21000 | 49 | Ծանոթություն 4 |
| 7 | Մ.Ս. | 45 | 20000 | 27 | Ծանոթություն 5 |

Հաշվեքննողների ուսումնասիրությունների տվյալները հիմնված են նշված ֆերմերների համայնքների ղեկավարների կողմից տրամադրված «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» արտացոլված տեղեկության հիման վրա տրամադրված տեղեկանքների:

**Ծանոթություն 1.** Համաձայն Սևան համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» 01.01.2021թ. դրությամբ, ինչպես նաև «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» առ 01.01.2021թ, 01.07.2021թ. և 04.10.2021թ. դրությամբ Մ.Ո. անվամբ հաշվառված է 8 խոշոր եղջերավոր կենդանի: Մ.Ո. հանդիսանում է Տ.Ո. մայրը:

**Ծանոթություն 2.** Համաձայն Սևան համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» 01.01.2021թ. դրությամբ, ինչպես նաև «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» առ 01.01.2021թ, 01.07.2021թ. և 04.10.2021թ. դրությամբ Ռ.Հ. անվամբ խոշոր եղջերավոր կենդանիներ հաշվառված չեն:

**Ծանոթություն 3.** Համաձայն Հայրավանք համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» 01.01.2021թ. դրությամբ, ինչպես նաև «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» առ 01.01.2021թ, 01.07.2021թ. և 04.10.2021թ. դրությամբ Դ.Հ. անվամբ հաշվառված են 68 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, իսկ Ա.Հ. անվամբ խոշոր եղջերավոր կենդանիներ հաշվառված չեն:

**Ծանոթություն 4.** Համաձայն Լճափ համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» 01.01.2021թ. դրությամբ, Ու.Ջ. անվամբ /հանդիսանում է Ու.Ռ-ի հայրը/ հաշվառված են 27 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, իսկ Ս.Վ. /հանդիսանում է Գ.Ս.-ի հայրը/ հաշվառված է 49 խոշոր եղջերավոր կենդանիներ:

**Ծանոթություն 5.** Համաձայն Ծովազարդ համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» 01.01.2021թ. դրությամբ, Ս.Մ անվամբ հաշվառված են 30 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ:

**Առկա է անհամապատասխանություն վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող փաստացի կենդանիների գլխաքանակների միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը ավելին է ներկայացվել շուրջ 138 000լ /30000/70*8+62000+50000/ նախատեսված մթերման համար՝ 22,080.00 հազ. դրամ գումարի չափով /138 000*160դր.-պայմանագրերով նախատեսված 1լ կաթի բազիսային նվազագույն գին/ մթերման գումար:**

«Ինեկոբանկ» ՓԲԸ-ի և «Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ-ի միջև 12.04.2021թ. կնքվել է վարկային թիվ IF21/00017 պայմանագիրը գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով 150,000.00 հազ. դրամ գումարի չափով:

**Աղյուսակ 3**

| **Հ/Հ** | Մթերք վաճառող | **ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվություն** | **ըստ համայնքի ղեկավարի և ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքի** | **Ծանոթություն** |
|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կովերի գլխաքանակ | մթերված կաթի քանակ /լիտր/ | Կովերի գլխաքանակ | |
| | Վ.Բ. | 29 | 500000 | 9 | Ծանոթություն 1 |
| | Մ.Ն. | 46 | 500000 | 19 | Ծանոթություն 2 |

**Ծանոթություն 1.** Համաձայն Շիրակի մարզի Արևշատ համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» 01.01.2021թ. դրությամբ, ինչպես նաև «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» առ 01.07.2021թ. և 06.09.2021թ. դրությամբ Վ.Բ. անվամբ հաշվառված է 9 խոշոր եղջերավոր կենդանի:

**Ծանոթություն 2.** Համաձայն Արագածոտնի մարզի Հնաբերդ համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» 01.01.2021թ. դրությամբ, ինչպես նաև «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» առ 01.01.2021թ, 06.09.2021թ. և 04.10.2021թ. դրությամբ Մ.Ն. անվամբ հաշվառված է 19 խոշոր եղջերավոր կենդանիներ /Մ.Ն. հանդիսանում է Մ.Ն. որդին/:

**Առկա է անհամապատասխանություն վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող փաստացի կենդանիների գլխաքանակների միջև, որի արդյունքում Ֆինանսական կազմակերպությանը ավելին է ներկայացվել շուրջ 638,305լ /500000/29*9+500000/46*19/ նախատեսված մթերման համար՝ 111,703.37 հազ. դրամ գումարի չափով /638,305*175դր.-պայմանագրերով նախատեսված 1լ կաթի բազիսային միջին նվազագույն գին/ մթերման գումար:**

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել:

***Եզրակացություն***

Առկա է անհամապատասխանություն վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և

ֆերմերներին պատկանող փաստացի կենդանիների գլխաքանակների միջև, որի արդունքում ֆինանսական կազմակերպությանը ավելի է ներկայացվել շուրջ 776,305լ կաթ, 133,783.37 հազ.դրամ գումարով, այդ թվում՝ «Միլկաթ» ՍՊԸ-ն 138,000լ կաթ, 22,080.00 հազ. դրամ գումարի չափով, իսկ «Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ-ն՝ 638,305լ կաթ, 111,703.37 հազ. դրամ գումարի չափով:

## 4. 1022-12001՝ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում վարկառու տնտեսվարողների վարկային միջոցների նպատակային օգտագործման մոնիթորինգի վերաբերյալ

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-L որոշմամբ հաստատված «Ծրագրի մոնիթորինգը» բաժնի 20-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի այն է՝ «Ֆինանսական կառույցը նախատեսում է հաշվետվություն ներկայացնել ԳՖԿ-ին և Նախարարությանը: Հաշվետվությունը պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն ծրագրի ընթացքի մասին, այդ թվում՝ տեղեկատվություն իրականացված նպատակային մոնիթորինգի արդյունքների մասին» և ՖԿ-ի կողմից անցկացված մոնիթորինգի արդյունքների արձանագրումների միջև:***

*ՀՀ պետական բյուջեից Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 4,027,062.40 հազ. դրամ: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանի (վեց ամիս) ճշտված պլանը կազմել է՝ 2,416,237.40 հազ. դրամ,որը ամբողջությամբ կատարվել է, այսինքն դրամարկղային ինչպես նաև փաստացի ծախսերը նույնպես կազմել են՝ 2,416,237.40 հազ. դրամ:*

***<u>6 ամիսների հաշվեքննության արդյունք</u>***

2021 թվականի առաջին վեց ամիսների սուբսիդավորման Ծրագրի վարկային պորտֆելից հաշվեքննողների կողմից վարկառուների մոնիթորինգի իրականացման համար կազմվել է վիճակագրական նոր ընտրանք, որում ներառվել է ընդհանուր թվով 15 տնտեսվարողներ Գեղարքունիքի մարզի համայնքներից, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է Հավելված 2-ում:

Ընտրանքում ներկայացված տնտեսվարողներից աշխատանքային փաստաթղթի (հարցաթերթի) միջոցով ստացված հաստատումների վերլուծության, համայնքների անասնագլխաքանակների հաշվառման մատյանների տվյալների և համայնքների անասնաբույժների պատվաստումների գրանցամատյանների տվյալների համադրումից պարզվեց, որ վարկառուները ստացված վարկերը օգտագործել են հիմնականում գյուղատնտեսության մեջ, սակայն վարկի ձևակերպման ժամանակ վարկի օգտագործման ընտրված ոլորտը հետագայում որոշ դեպքերում չի համապատասխանում փաստացի կատարված աշխատանքների ուղղությունների հետ: Ընտրված վարկառուներից 2-ը ունեին վարկի օգտագործման ուղղության մասնակի փոփոխություն: Այսպես՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի բնակիչ Թ.Վ.-ն «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից «խառը անասնապահության» մեջ ներդնելու նպատակով 7.02.2020թ. ստացված 4,000.00 հազ. դրամի վարկի գումարը, իր կողմից հաստատված աշխատանքային փաստաթղթի (հարցաթերթի) համաձայն, օգտագործել է սպանդանոցի կառուցման և անասնագոմի վերանորոգման համար: Նույն մարզի Լճաշեն համայնքի բնակիչ Ի.Ա.-ն «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից «խոշոր եղջերավոր կենդանիների բուծման» նպատակով 18.12.2020թ. ստացված 4,000.00 հազ. դրամի վարկի գումարը, իր կողմից հաստատված աշխատանքային փաստաթղթի (հարցաթերթի) համաձայն, օգտագործել է պահեստ գնելու համար, իսկ «խառը անասնապահության» մեջ ներդնելու նպատակով 17.09.2020թ. ստացված 1,000.00 հազ. դրամի վարկի գումարը օգտագործել է ծածկի թիթեղ գնելու և պատրաստելու համար:

Ընտրված վարկառուներից ռիսկային համարվող 3 վարկառուի կողմից վարկերի նպատակային օգտագործման համար հաշվեքննողները գրությունով դիմեցին ԳՖԿ-ին, որպեսզի տրամադրվի ՖԿ-ների կողմից իրականացված նպատակային և ֆինանսական մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվություն: Արդյունքում՝ ԳՖԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունից պարզվեց, որ «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի կողմից իրականացված մոնիթորինգի թերթիկներում բացակայում է տեղեկատվություն վարկառուներից 2-ի՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում գրանցված «Մ.Ա.Կ.» ԱՁ-ի և Լճաշեն համայնքի բնակիչ Հ.Ռ.-ի ստացած վարկերի մասով իրականացրած նպատակային մոնիթորինգի արդյունքների մասին: Ավելին՝ «Մ.Ա.Կ.» ԱՁ-ի ունեցած անասնագլխաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը համայնքի անասնագլխաքանակների հաշվառման մատյանում և համայնքի անասնաբույժի պատվաստումների գրանցամատյանում բացակայում են, իսկ Հ.Ռ.-ի «խոշոր եղջերավոր կենդանիների բուծման» նպատակով ստացված 3,100.00 հազ. դրամի

վարկի գումարից, համաձայն մոնիթորինգի թերթիկի, ձեռք է բերվել 1,000.00 արժողությամբ «Չեխական խոտհնձիչ», որը աշխատանքային փաստաթղթի (հարցաթերթի) միջոցով ճշտել չհաջողվեց, քանի որ վարկառուն համաձայն համայնքի տեղեկատվության ընտանիքով բացակայում էր երկրից: Ռիսկային համարվող 3-րդ վարկառուի՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի բնակիչ Պ.Ռ.-ին (որը գործունեություն էր ծավալում Ծովագյուղ համայնքում) վարկ տրամադրող «Արարատբանկ» ՓԲԸ-ի կողմից իրականացված մոնիթորինգի թերթիկում նշված էր վարկի նպատակային օգտագործման համապատասխանության մասին, ավելին՝ վարկառուի կողմից հաստատված աշխատանքային փաստաթղթի (հարցաթերթի) մեջ անասնագլխաքանակները համապատասխանում էր բանկի կողմից անցկացված մոնիթորինգի թերթիկում նշված քանակների հետ:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմի արձագանք չի ներկայացվել:

***Եզրակացություն***

ԳՖԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունից պարզվեց, որ «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի կողմից իրականացված մոնիթորինգի թերթիկներում բացակայում է տեղեկատվություն վարկառուներից 2-ի՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում գրանցված «Մ.Ա.Կ.» ԱՁ-ի և Լճաշեն համայնքի բնակիչ Հ.Ռ.-ի ստացած վարկերի մասով իրականացրած նպատակային մոնիթորինգի արդյունքների մասին: Արդյունքում՝ առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշմամբ հաստատված «Ծրագրի մոնիթորինգը» բաժնի 20-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի այն է՝ «Ֆինանսական կառույցը նախատեսում է հաշվետվություն ներկայացնել ԳՖԿ-ին և Նախարարությանը: Հաշվետվությունը պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն ծրագրի ընթացքի մասին, այդ թվում՝ տեղեկատվություն իրականացված նպատակային մոնիթորինգի արդյունքների մասին» և ՖԿ-ի կողմից անցկացված մոնիթորինգի արդյունքների արձանագրումների միջև:

## 5. 1022-12004՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 24-րդ կետի պահանջների և վարկառուների ու բանկերի կնքված պայմանագրերի միջև:***

*ՀՀ պետական բյուջեից Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում իրականացման համար 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,633,031.20 հազ. դրամ: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանի (վեց ամիս) ճշտված պլանը կազմել է՝ 979,818.70 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 979,818.70 հազ. դրամ:*

ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատվել է գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը: Նշված ծրագրի նպատակն է հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության ոլորտում զբաղված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը: Սուբսիդավորման ենթակա վարկերը պետք է նպատակաուղղվեն բացառապես մթերվող գյուղատնտեսական հումքի արժեքի վճարմանը:

2021թ. երկրորդ եռամսյակում նշված ծրագրի շրջանակներում վճարվել է 979,818.70 հազ.դրամ գումար: Նշված գումարը վճարվել է նախորդ տարիներին ծրագրի ընթացքում տրամադրված վարկերի տոկոսագումարների վճարման համար: Նշենք, որ նշված գումարից 2021թ. կնքված նոր վարկային պայմանագրերի տոկոսադրույքների սուբսիդավորման գումարը առաջին կիսամյակում կազմել է 5,769.40 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով նշված ծրագրի շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը՝ առաջին եռամսյակում ներկայացվել և հաստատվել է մեկ շահառուի վերաբերյալ՝ «Սպայկա» ՍՊԸ, որի անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջին եռամսյակի հաշվեքննության արձանագրությամբ, իսկ երկրորդ եռամսյակում թվով 15 հայտ /աղյուսակ 1/:

Աղյուսակ 4

| Հ/Հ | Վարկառու | Վարկի ժամկետ | Վարկի արտոնյալ ժամկետ | Վարկի անվանական տոկոսադրույք |
|---|---|---|---|---|
| 1 | «Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ | 12 ամիս | 3 ամիս | 13,2 % |
| 2 | «Անիֆուդ» ՍՊԸ | 12 ամիս | 3 ամիս | 13,15 % |
| 3 | «Արարատ քենինգ ֆեքթըրի» ՍՊԸ | 12 ամիս | 3 ամիս | 13,1 % |
| 4 | «Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ | 12 ամիս | 3 ամիս | 12,9 % |
| 5 | «Երասխի գինու գործարան» ՍՊԸ | 24 ամիս | 6 ամիս | 13 % |
| 6 | «Ֆամմա Ֆուդ» ՍՊԸ | 12 ամիս | 3 ամիս | 12,9 % |
| 7 | «Գոլդեն Գոութ» ՓԲԸ | 12 ամիս | 3 ամիս | 13 % |
| 8 | «ՄԱՊ» ՓԲԸ | 12 ամիս | 3 ամիս | 13,15 % |
| 9 | «Միլլկաթ» ՍՊԸ | 12 ամիս | 2 ամիս | 13,23 % |
| 10 | «Ոսկե Սեր» ՍՊԸ | 12 ամիս | 3 ամիս | 12,9 % |
| 11 | «Խաչատուր Տիգրանի Գրիգորյան» ԱՁ | 12 ամիս | 3 ամիս | 12,9 % |
| 12 | «Հովհաննես Մարտինյան» ԱՁ | 12 ամիս | 3 ամիս | 13,5 % |
| 13 | «Շամբ Բիզնես» ՍՊԸ | 12 ամիս | 3 ամիս | 13,14 % |
| 14 | «Եվրոթերմ» ՓԲԸ | 12 ամիս | 3ամիս | 13 % |

Ինչպես ներկայացված է աղյուսակում, վարկերը տրամադրվել են 12,9-13,23 անվանական տոկոսադրույքներով:

ՀՀ կառավարության որոշման 24-րդ կետի համաձայն վարկերը տրամադրվում են առավելագույնը մեկ տարի մարման ժամկետով, առավելագույնը տարեկան 12 տոկոս անվանական տոկոսադրույքով: Վարկի մայր գումարի վճարման համար արտոնյալ ժամկետը պետք է սահմանվի վարկը տրամադրելու պահից հաշվարկելով առնվազն 2 ամսից, բայց ոչ ավելին քան 3 ամիս:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել

***Եզրակացություն***

**Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 24-րդ կետի պահանջների և վարկառուների ու բանկերի կնքված պայմանագրերի միջև:**

## 6. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում վարկառուների և ֆերմերների միջև կնքված պայմանագրերի վերաբերյալ

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ մասի պահանջների և կողմերի /վարկառուի ու ֆերմերների / կնքված պայմանագրերի միջև:***

ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշման 23-րդ կետի 2-րդ մասի համաձայն, կնքված պայմանագրերը պետք է ներառեն հետևյալ դրույթները՝

ա. գյուղացիական տնտեսությանը սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալական հիմունքներով օգտագործվող հողատարածքի (հողատարածքների) չափը, կամ տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, կամ վաճառվող գյուղատնտեսական կենդանիների տեսակը և գլխաքանակը կամ շինշիլայի գլխաքանակը,

բ. հումքի գնման քանակը, ժամկետները և գնման փաստացի կամ նվազագույն գինը, ըստ առանձին սորտերի կամ տեսակների,

գ. հումքի արժեքի վճարման կարգը և ժամկետները,

դ. կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը,

ե. անհաղթահարելի ուժի ազդեցությունը,

զ. պայմանագրի գործողության ժամկետը և դադարման հիմքերը,

է. վաճառողի բանկային հաշվի համարը: Հումքի գնման պայմանագրում վաճառողի բանկային հաշվի համարը նշված չլինելու դեպքում վարկառուն պետք է ՖԿ-ին որևէ այլ եղանակով տրամադրի վաճառողի բանկային հաշվի համարը,

ը. գյուղացիական տնտեսությանը հումքի արտադրության համար անհրաժեշտ կանխավճարի տրամադրման մասին (ըստ անհրաժեշտության).

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել:

***Եզրակացություն***

Կնքված պայմանագրերի դրույթները չեն համապատասխանում ՀՀ կառավարության որոշմամբ դրույթների: ***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ մասի պահանջների և կողմերի /վարկառուի ու ֆերմերների / կնքված պայմանագրերի միջև:***

## 7. 1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում իրականացվող մոնիթորինգի վերաբերյալ

*Կրկնվող կետ*

***Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետով սահմանված պահանջների մասով:***

ՀՀ պետական բյուջեից Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,175,300.00 հազ. դրամ: 2021 թվականի վեց ամիսների դրամարկղային ծախսը կազմել է 2,172,767.73 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,172,767.73 հազ. դրամ:

Ծրագիրն ուղղված է Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տնտեսվարողներին ֆինանսական օժանդակության տրամադրմանը՝ նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման եղանակով: Ծրագիրն կարգավորվում է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի միջոցով.

- ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 31-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին, երկրորդ եվ երրորդ

միջոցառումների շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգերը հաստատելու մասին» (այսուհետ՝Կարգ) թիվ N 416-Լ որոշմամբ,

- ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետեվանքների չեզոքացման առաջին միջոցառումը հաստատելու մասին» (այսուհետ՝ Որոշում) թիվ N 355-Լ որոշմամբ,
- Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և առևտրային բանկերի կամ վարկային կազմակերպությունների (այսուհետ՝ Ֆինանսական կառույց) միջև կնքված պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)։

Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետի համաձայն՝ միջոցառման մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը։

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Նախարարության որևէ ստորաբաժանում լիազորված չէ մոնիթորինգն իրականացնելու համար, ինչպես նաև չի հաստատվել մոնիթորինգ իրականացնելու կարգ։ Ծրագրի ողջ ընթացքում Նախարարության կողմից չի իրականցվել մոնիթորինգ։

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել։

***Եզրակացություն***

Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետի համաձայն՝ միջոցառման մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը։ Ծրագրի ողջ ընթացքում Նախարարության կողմից չի իրականցվել մոնիթորինգ։ ***Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետով սահմանված պահանջների մասով։***

## 8. 1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում Նախարարության և ՖԿ-ների միջև

**կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման վերաբերյալ**

***Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 8.2 կետով սահմանված պահանջների մասով:***

Հաշվեքննության ընթացքում Նախարարությունը հաշվեքննողներին է տրամադրել հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածի Ծրագրի գանձապետական հաշվի քաղվածքը, ինչպես նաև Պայմանագրի 5.2 կետով սահմանված՝ Ֆինանսական կառույցների հայտերը և Պայմանագրի 8.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված Ֆինանսական կառույցների հաշվետվությունները:

Հաշվեքննողների կողմից ուսումնասիրվել և համադրվել են Ֆինանսական կառույցների կողմից ներկայացված 2021 թվականի հունվար-հունիս հաշվետու ամիսներն ընդգրկող հայտերը և հաշվետվությունները: Ինչպես նաև 2020 թվականի դեկտեմբեր ամսվա համար 2021 թվականի հունվար ամսին ներկայացված հայտերը, որի վճարումները ըստ Պայմանագրի իրականացվում են հայտերը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Այսպիսով հաշվեքննողների կողմից փաստացի ուսումնասիրվել են 2020 թվականի դեկտեմբեր, 2021 թվականի հունվար-մայիս ամիսների հայտերը, որոնց մասով Նախարարության կողմից կատարված վճարումները ներառում են հաշվեքննությամբ ընդգրկված ժամանակահատվածը:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Պայմանագրի 8.2 կետով սահմանվում է, որ Ֆինանսավորողը պարտավոր է ՖԿ-ի կողմից ներկայացված Հայտի ներկայացման պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում ՖԿ-ին փոխանցել սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարը, եթե Հայտը բավարարում է պահանջներին: Սակայն Հավելված 3-ով ներկայացված է Նախարարության կողմից կատարված վճարումները, որից պարզ է դառնում, որ Նախարարությունը ամբողջությամբ չի կատարել պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները՝ 1,249,486.37 գումարի չափով:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել:

***Եզրակացություն***

Պայմանագրի 8.2 կետով սահմանվում է, որ Ֆինանսավորողը պարտավոր է ՖԿ-ի կողմից ներկայացված Հայտի ներկայացման պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում ՖԿ-ին փոխանցել սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարը, եթե Հայտը բավարարում է պահանջներին: ***Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 8.2 կետով սահմանված պահանջների մասով:***

## 9. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակներում Նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ

*Կրկնվող կետ*

***Առկա է անհամապատասխանություն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի մասով, համաձայն որի, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:***

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի հունվարի 25-ի թիվ 30-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաստիքացուցակը, որում ՀՀ էկոնոմիկայի նախարարի համապատասխան հրամաններով 2021թ. առաջին եռամսյակում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Ըստ հրամանի՝ 25.01.2021թ. դրությամբ նախատեսվում է 459 հաստիքային միավոր, որից 112-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 24.4%: 01.06.2021թ. դրությամբ համաձայն նշված հրամանի հաստիքների թիվը կազմում է 390 միավոր, որից 87-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 22.3%: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ 01.06.2021թ. դրությամբ 87 թափուր հաստիքներից 69-ը 01.01.2021թ. դրությամբ նույնությամբ մնացել են թափուր: Նշենք նաև, որ մայիս ամսին հաստիքացուցակի փոփոխության հետևանքով կրճատված 69 հաստիքներից 19 հաստիքները եղել են նույնպես թափուր, որից 16 հաստիքները եղել են 01.01.2021թ. դրությամբ նույնությամբ մնացացած թափուր հաստիքներ:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմի արձագանք չի ներկայացվել:

*Եզրակացություն*

*Առկա է անհամապատասխանություն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի մասով, համաձայն որի, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:*

# IV. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

## 10. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից 2021 թվականի վեց ամիսների ընթացքում ներկայացված հաշվետվությունների քանակային /արդյունքային/ ցուցանիշների վերաբերյալ

*Կրկնվող կետ*

***Առկա է խեղաթյուրում 3,053,40 հազ.դրամ հազ.դրամ գումարի չափով:***

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի վեց ամիսների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 631,176.90 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 631,176.82 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 538,603.50 հազ. դրամ:

Համաձայն ԳԾԿ-ի կողմից Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-30.06.2021թ. ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվության՝ հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանով նախատեսվել է իրականացնել 455,360 հատ բրուցելյոզի նմուշառում, փաստացի կատարվել է 475,984 հատ նմուշառում: Հաշվետու ժամանակահատվածի փաստացի և պլանային ցուցանիշների տարբերությունը կազմել է 20,624 հատ, որը կազմակերպության կողմից պարզաբանվել է կայուն համաճարակային իրավիճակի պահպանմամբ՝ կատարվել են նախատեսվածից շատ ախտորոշման միջոցառումներ: ՀԱԲԼԾԿ-ի կողմից Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-30.06.2021թ. ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվության, իրականացվել է 502,326 հատ լաբորատոր փորձաքննություն, որից 491,184 հատ բրուցելյոզի փորձաքննություն, որից բրուցելյոզ հիվանդության կասկածով մարզային ստորաբաժանումներից կենտրոնական լաբորատորիային

տրամադրված նմուշների քանակը կազմում է 5643 հատ: Այսպիսով, 01.01.2021-30.06.2021թ. ժամանակահատվածի համար ըստ ներկայացված հաշվետվությունների բրուցելյոզի ախտորոշման գծով ԳԾԿ-ի կողմից ներկայցված նմուշառուների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների տարբերությունը կազմում է 9,477 հատ, հաշվի առնելով 5643 հատ կենտրոնական լաբորատորիայի փորձաքննությունները /491,184-475,984-5,643/, որը գումարային արտահայտությամբ կազմում է 3,053,40 հազ.դրամ /9,477*322.19/:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմի արձագանք չի ներկայացվել:

***Եզրակացություն***

2021 թվականի վեց ամիսների համար ըստ ներկայացված հաշվետվությունների բրուցելյոզի ախտորոշման գծով ԳԾԿ-ի կողմից ներկայցված նմուշառումների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների տարբերությունը կազմում է 9,477 հատ, որը գումարային արտահայտությամբ կազմում է 3,053,40 հազ.դրամ: ***Առկա է անհամապատասխանություն Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-30.06.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների միջև: Հաշվետվությունների միջև առկա անհամապատասխանությունը հանգեցրել է 3,053,40 հազ.դրամ հազ.դրամ գումարի չափով խեղաթյուրման:***

***Առաջարկություն Նախարարությանը***

Առաջարկվում է արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից կազմված հաշվետվությունները ներկայացնել նույն ժամանակահատվածի կտրվածքով:

## 11. 1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում ներկայացված հաշվետվության վերաբերյալ

***Առկա է խեղաթյուրում 1,249,486.37 հազ.դրամ հազ.դրամ գումարի չափով:***

Համաձայն Պետական բյուջեի կատարման հաշվետվության «Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի» 2021 թվականի վեց ամիսների ընթացքում փաստացի ծախսը կազմել է 2,172,767.73 հազ. դրամ: Հաշվեքննողների կողմից ուսումնասիրվել և համադրվել են Ֆինանսական կառույցների կողմից ներկայացված 2021 թվականի հունվար-հունիս հաշվետու ամիսներն ընդգրկող հայտերը և հաշվետվությունները: Ստորև աղյուսակում ներկայացվում է Ֆինանսական կառույցների կողմից ներկայացված հայտերի գումարը և պետական բյուջեի կատարման հաշվետվությունում ներկայացված փաստացի ծախսը.

**Աղյուսակ 5, Հազ.դրամ**

| **Ֆինանսական կառույցների կողմից ներկայացված հայտերը** | **Նախարարության կողմից պետական բյուջեի կատարման փաստացի ծախսը** | **Տարբերություն** |
|---|---|---|
| 3,422,254.10 | 2,172,767.73 | 1,249,486.37 |

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմի արձագանք չի ներկայացվել:

***Եզրակացություն***

Հաշվեքննողների կողմից ուսումնասիրվել և համադրվել են Ֆինանսական կառույցների կողմից ներկայացված 2021 թվականի հունվար-հունիս հաշվետու ամիսներն ընդգրկող հայտերը և հաշվետվությունները: **Առկա է անհամապատասխանություն Նախարարության կողմից ներկայացված ֆինանսական կառույցների հայտերի և պետական բյուջեի կատարման փաստացի ծախսի միջև:**

***Առկա անհամապատասխանության հետևանքով առաջացել է խեղաթյուրում պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության փաստացի ծախսի ներկայացման մասով՝ 1,249,486.37 հազ.դրամ հազ.դրամ գումարի չափով:***

## 12. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակներում Նախարարության աշխատակիցների պարգևատրման վերաբերյալ

*Կրկնվող կետ*

***Առկա է խեղաթյուրում կապված Նախարարության կողմից սխալ հոդվածի ներքո պարգևատրման ծախսերի ներկայացման հետ: Նշվածը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի հետ:***

*ՀՀ պետական բյուջեից Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակներում 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ», 411200 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» և 411300 «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում» հոդվածների իրականացման համար 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,906,125.90 հազ. դրամ: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանի (վեց ամիս) ճշտված պլանը կազմել է՝ 804,522.40 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 777,652.13 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 863,413.82 հազ. դրամ:*

1058-11001 ծրագրի՝ «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» միջոցառման շրջանակում կատարվել են փաստացի ծախսեր 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ», 411200 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» և 411300 «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում» հոդվածներով: Ստորև ներկայացված աղյուսակում նշված է այդ հոդվածների գծով աշխատակիցների հաշվարկված վճարները՝

տարանջատելով պարգևատրումները մնացած այլ վճարներից, որոնք ներկայացված են «Հիմնական աշխատավարձ» սյունակում՝

Աղյուսակ 6, հազ.դրամ

| Հոդվածի կոդ | Հոդվածի անվանում | Հիմնական աշխատավարձ | Պարգևատրում | Պարգևատրման տեսակարար կշիռը հիմնական աշխատավարձում |
|---|---|---|---|---|
| 4111 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 564,128.48 | 121,367.73 | 21.5% |
| 4112 | Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | - | 123,638.85 | 0% |
| 4113 | Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում | - | 61,819.2 | 0% |
| | **Ընդամենը** | 564,128.48 | **306,825.78** | **54.3 %** |

Ինչպես պարզվում է 2021թ. վեց ամիսների ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցները պարգևատրվել է 121,367.73 հազ. դրամ գումարի չափով 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված գումարի խնայողություններից: Նշված խնայողությունները առաջացել են 2021թ. վեց ամիսների ընթացքում նախարարության հաստիքացուցակով հաստատված թափուր պաշտոնները չհամալրելու արդյունքում:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողներին կարող է պարգևատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված

միջոցներից և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Նույն հոդվածի 10-րդ կետով սահմանված է, որ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ *անմիջական ղեկավարի առաջարկությամբ* կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով պարգևատրումների տրամադրման ընթացակարգերը պարզվեց, որ աշխատակիցների որակյալ աշխատանքների կամ հատուկ առաջադրանքներ կատարելու վերաբերյալ հիմնավորումները բացակայում են:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել:

***Եզրակացություն***

2021թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցները պարգևատրվել են 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված գումարի խնայողություններից: Նշվածը հակասում է ***ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի պահանջներին: Առկա է խեղաթյուրում 121,367.73 հազ.դրամի չափով:***

# V. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

## 13. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր 1022-12001

ՀՀ պետական բյուջեից Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 4,027,062.40 հազ. դրամ: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանի (վեց ամիս) ճշտված պլանը կազմել է՝ 2,416,237.40 հազ. դրամ,որը ամբողջությամբ կատարվել է, այսինքն դրամարկղային ինչպես նաև փաստացի ծախսերը նույնպես կազմել են՝ 2,416,237.40 հազ. դրամ:

Ծրագիրն ուղղված է ագրոպարենային ոլորտի զարգացման ծրագրերի վարկավորմանը: Մասնակիցներն են գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք (միասին՝ տնտեսվարողներ), առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները (այսուհետ՝ ՖԿ), Նախարարությունը, Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղատնտեսական ֆինանսավորման կառույցը (այսուհետ՝ ԳՖԿ): Ծրագրի շահառուների ընտրության չափանիշներն են՝ ՀՀ գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներ, որոնք ընտրվում են համաձայն ՀՀ կառավարության 07.03.2019թ. թիվ 184-Լ որոշմամբ հաստատված Ծրագրի և ՖԿ-ների կողմից հաստատված համապատասխան չափանիշների:

Համաձայն Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվության 01.01.2021թ.-30.06.2021թ. ժամանակահատվածի համար տարեկան ճշտված պլանով նախատեսվել է սուբսիդավորել 7000 տնտեսվարողների՝ վարկառուների: Հաշվետու ժամանակաշրջանի (վեց ամիս) ճշտված պլանով այն կազմել է՝ 2800 վարկառու, իսկ փաստացի վարկառուների թիվը վեց ամսում կազմել է՝ 11181 տնտեսվարող: Հաշվետու ժամանակահատվածի վարկառուների քանակի ճշտված պլանի և

փաստացիի տարբերությունը կազմել է՝ 8381 ավել վարկառու: Վարկառուների թվի ավելացումը պայմանավորված է ծրագրի նկատմամբ պահանջարկի և վարկային պորտֆելի ավելացմամբ, ինչպես նաև 0% տոկոսադրույքով տրամադրվող վարկերի առկայությամբ:

### 13.1 «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» Ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ

Երեք ամիսների հաշվեքննության արդյունքում պարզվել էր որ, Նախարարության՝ գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից (այսուհետ՝ Վարչություն) մշակված և համապատասխան ընթացակարգերով անցած մոնիթորինգի իրականացման կարգի նախագիծը չի հաստատվել Նախարարության կողմից: Ավելին՝ համաձայն ՀՀ կառավարության 20.05.2021թ. թիվ 832-Լ որոշման՝ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշման Ծրագրի 17-րդ կետը ուժը կորցրած է ճանաչվել, որի արդյունքում վարկերի նպատակայնության մոնիթորինգն այլևս չի հանդիսանում Նախարարության գործառույթը:

### 13.2 Վարկառու տնտեսվարողներ սուբյեկտների կողմից վարկային միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ

Երեք ամիսների հաշվեքննության արդյունքում պարզվել էր որ, Վարչության կողմից ոչ արժանահավատ համարվող բոլոր ութ դեպքերի վարկառուները «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի հաճախորդներ են, և ՖԿ-ն նպատակային էր համարում 8 դեպքերից 7-ը, ուստի Վարչության, ԳՖԿ-ի, գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչության և ՖԿ-ի ներկայացուցիչների համաձայնության արդյունքում, անարժանահավատ համարվող 8 դեպքերից ԳՖԿ-ին էր ներկայացվել թվով 6 այն տնտեսվարողների ցանկը, որոնց վարկերը դիտարկվել էին ոչ նպատակային օգտագործված: ԳՖԿ-ն 14.06.2021թ. թիվ ԳՖԿ-365 գրությունով ՖԿ-ին առաջարկել էր դադարեցնել վերջիններիս վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը և սուբսիդավորված գումարները համապատասխան ընթացակարգով հետ փոխանցել, իսկ երկու տնտեսվարողի ՖԿ-ն արդեն նախորոք հանել էր սուբսիդավորման

ցանկից: Արդյունքում, Ծրագրի շրջանակում որոշվել էր դադարեցնել 8 տնտեսվարողի վարկերի սուբսիդավորումը:

***6 ամիսների հաշվեքննության արդյունք***

Սուբսիդավորման վերջնական դադարեցման վերաբերյալ պաշտոնապես ԳՖԿ-ի կողմից 27.09.2021 թ. Նախարարություն ուղարկված N ԳՖԿ-533 գրության համաձայն դադարեցվել է բոլոր 8 վարկառուների վարկերի սուբսիդավորման գործընթացը: Վարկառուներից երկուսի՝ Հ.Հ.-ի և Մ.Ա.-ի մասով սուբսիդավորված գումարները ամբողջությամբ հետ է վերադարձվել, իսկ մնացածի մասով կվերադարձվի ըստ համապատասխան ժամանակացույցի, որի վերաբերյալ տեղեկատվությունը ըստ վարկառուների ներկայացվում է Հավելված 4-ում:

Հաշվեքննության ընթացքում հաշվեքննողների կողմից ԳՖԿ-ից պահանջվել էր ներկայացնել տեղեկատվություն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշմամբ հաստատված Ծրագրի 16-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման և կեղծ տեղեկատվություն տրամադրելու դեպքերում վարկի սուբսիդավորման գումարը վարկառուից պահանջելու և տոկոսադրույքի սուբսիդավորման դադարեցման դեպքերի վերաբերյալ: Արդյունքում՝ «Կամուրջ» ՈՒՎԿ-ի կողմից վարկերի ոչ նպատակային օգտագործողներ են համարվել թվով 3 վարկառուներ և հանվել են սուբսիդավորման ծրագրից, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 7, Հազ. դրամ

| Վարկառու | Գործունեության մարզ | Գործունեության բնակավայր | Վարկի գումար /հազ. դրամ/ | Սուբսիդավորված տոկոսագումար /հազ. դրամ/ | Վարկառուի և ՖԿ-ի պայմանագրի համարը | Վարկառուի և ՖԿ-ի պայմանագրի կնքման և ավարտի ամսաթվերը | Վարկի օգտագործման ոլորտ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պ.Ա.Լ. | Շիրակ | գ. Սարատակ | 4,000.00 | 418.79 | 123143 | 30.06.2020թ. 15.12.2023թ. | Գյուղատնտեսություն,անտառային տնտեսություն և ձկնորսություն |
| Մ.Ա.Ա | Տավուշ | ք. Նոյեմբերյան | 1,000.00 | 127.04 | 122402 | 22.05.2020թ. 20.04.2022թ. | Անասնապահություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Բ.Բ.Գ | Տավուշ | գ. Կոթի | 3,000.00 | 410.33 | 120903 | 05.02.2020թ.<br>22.01.2024թ. | Անաանապահությու ն |

Սուբսիդավորված գումարի վերադարձը ԳՖԿ-ին իրականացնում է ՖԿ-ն եռամյա ժամկետում, որի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:

## 14. 1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում շահառուների և ֆերմերների միջև կնքված պայմանգրային դրույթների կատարման վերաբերյալ

Համաձայն շահառուների և ֆերմերների միջև կնքված պայմանգրերի դրույթների մթերված հումքի դիմաց վճարումները կատարվում են հումքի մատակարարումից հետո, սակայն ուսումնասիրությունից պարզվել է, որ որոշ վարկառու կազմակերպություններ իրականացրել են մասնակի կամ ամբողջական վճարումներ, առանց համապատասխան հումքի քանակների մթերումների, մասնավորապես՝

**Աղյուսակ 8**

| Հ/Հ | Շահառու կազմակերպություն | Ստացված միջոցների ծախսման անհամապատասխանություններ |
|---|---|---|
| 1 | «Ամասիայի գխավորող պանրագործարան» ՍՊԸ | Վարկը տրամադրվել է 12.04.2021թ. և 13.04.2021թ. ֆերմերներին կատարվել է 24,000.00 հազ. դրամի վճարումներ, սակայն մթերումները սկսել են իրականացվել 07.05.2021թ. /ընկերության վերաբերյալ այլ անհամապատասխանունները և խեղաթյուրումները ներկայացված է սույն արձանագրության 1,2 կետում/: |
| 2 | «Անիֆուդ» ՍՊԸ | Վարկը տրամադրվել է 10.05.2021թ. և նույն օրը թվով 4 ֆերմերների կատարվել է 25,000.00 հազ. դրամի վճարումներ, սակայն մթերումների գնման ակտերի իրականացվել են հունիս-օգոստոս ամիսներին: Նշենք նաև, պայմանագրեր են կնքվել թվով 4 ֆերմերների հետ, վարկի ստացման համար վարկային կազմակերպությանը ներկայացված ձև 1-ով |

| | | |
|---|---|---|
| | | ներկայացվել է 3 ֆերմեր: Ընդ որում ձև 1-ում չներռված ֆերմերին կատարվել է 5,000.00 դրամի վճարում, առանց համապատասխան գնման ակտի |
| 3 | «Երասխի գինու գործարան» ՍՊԸ | Ստացված վարկերը ուղղվել են նախորդ տարում կատարված մթերումների վճարումների համար |
| 4 | «ՄԱՊ» ՓԲԸ | Ստացված վարկերը ուղղվել են նախորդ տարում կատարված մթերումների վճարումների համար |
| 5 | «Միլկաթ» ՍՊԸ | Վարկը տրամադրվել է 24.05.2021թ. և նույն օրը ֆերմերներին կատարվել է 40,000.00 հազ. դրամի վճարումներ, սակայն մթերումները սկսել են իրականացվել 01.06.2021թ. /ընկերության վերաբերյալ այլ անհամապատասխանությունները և խեղաթյուրումները ներկայացված է սույն արձանագրության 1,2 կետում/: |
| 6 | «Հովհաննես Մարտինյան» ԱՁ | Վարկը տրամադրվել է 05.04.2021թ. և նույն օրը ֆերմերներին կատարվել է 15,000.00 հազ. դրամի վճարումներ, սակայն մթերումները 01.07.2021թ. դրությամբ մթերումներ չեն իրականացվել: |
| 7 | «Եվրոթերմ» ՓԲԸ | Ստացված վարկերը ուղղվել են նախորդ տարում կատարված մթերումների վճարումների համար |

*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի*
*2021թ. հոկտեմբերի 29-ի թիվ 285-Ա որոշմամբ*

# VI. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

| | Անհամապատասխանություն / խեղաթյուրում/ հսկողության գործընթացի | Վերացված է /վերացված չէ / ընթացքում է[3] | Հիմնավորումներ[4] | 6 ամիսների հաշվեքննության արդյունք |
|---|---|---|---|---|
| 1 | **Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում 2021 թվականի վեց ամիսների ընթացքում ձեռքբերված առողջապահական և լաբորատոր նյութերի վերաբերյալ**<br>*Առկա է անհամապատասխանություն ՀՕ-195 օրենքի 1-ին հոդվածի մասով:*<br>2021 թվականին Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի համար կազմակերպված գնման ընթացակարգերը համարվել են չկայացած: Նախարարությունը, հիմնավորմամբ դիմել է ՀՀ Կառավարությանը՝ Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի գնման նպատակով հրատապության հիմքով մեկ անձից գնում կատարելու և լրացուցիչ գումար պահանջելու համար: Հիմնավորման մեջ նաև նշելով ԱԱՀ-ի համար գումարի պահանջը: Հետևաբար, առկա է անհամապատասխանություն ՀՕ-195 օրենքի 1-ին հոդվածի մասով: Միևնույն ժամանակ | Վերացված չէ | Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել | Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում |

3 Ընտրել երեք տարբերակներից մեկը/լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

4 Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքները վերացման ուղղությամբ, պարզաբանումներ չվերացման պատճառների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ վերացման ժամանակացույցով ու պատասխանատուների ցանկով/լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պատվաստանյութերի ուշ մատակարարման հետևանքով 326,087 հատ /652,174 մլ/ կանխարգելիչ միջոցառում պակաս է իրականացվել:<br><br>Նախարարության կողմից Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման գործընթացում առկա են պլանային և կատարողական ցուցանիշների միջև անհամապատասխանություններ և հսկողական գործընթացի թերացումներ: Վերոնշյալը հանգեցրել է 2019-2021թթ ընթացքում նշված պատվաստանյութերի հրատապության հիմքով մեկ անձից գնմանը, պատվաստանյութերի ուշ մատակարարմանը և արդյունքում 2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Դաբաղ պատվաստանյութի գծով 326,087 հատ /652,174 մլ/ պակաս հակադաբաղային միջոցառման իրականացմանը: 2021 թվականին Դաբաղ պատվաստանյութը մեկ անձից՝ միջնորդ կազմակերպությունից գնելու հետևանքով, Նախարարությանը մատակարարված ապրանքի գինը գերազանցել է արտադրող կազմակերպության վաճառքի գնին, որը կազմել է 63,099.84 հազ. դրամ: | | | |
| 2 | **Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից 2021 թվականի վեց ամիսների ընթացքում ներկայացված հաշվետվությունների քանակային /արդյունքային/ ցուցանիշների**<br><br>*Առկա է անհամապատասխանություն Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-30.06.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների միջև:*<br><br>2021 թվականի վեց ամիսների համար ըստ ներկայացված հաշվետվությունների բրուցելյոզի ախտորոշման գծով ԳԾԿ-ի կողմից | Վերացված չէ | Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել | Տես կրկնվող կետ 2 և 9 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ներկայցված նմուշառումների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների տարբերությունը կազմում է 9,477 հատ, որը գումարային արտահայտությամբ կազմում է 3,053,40 հազ.դրամ: Առկա է անհամապատասխանություն Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-30.06.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների միջև: Հաշվետվությունների միջև առկա անհամապատասխանությունը հանգեցրել է 3,053,40 հազ.դրամ հազ.դրամ գումարի չափով խեղաթյուրման: | | | |
| 3 | **1022-12001՝ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում վարկառու տնտեսվարողների վարկային միջոցների նպատակային օգտագործման մոնիթորինգի վերաբերյալ**<br>*Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշմամբ հաստատված «Ծրագրի մոնիթորինգը» բաժնի 20-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի այն է՝ «Ֆինանսական կառույցը նախատեսում է հաշվետվություն ներկայացնել ԳՖԿ-ին և Նախարարությանը: Հաշվետվությունը պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն ծրագրի ընթացքի մասին, այդ թվում՝ տեղեկատվություն իրականացված նպատակային մոնիթորինգի արդյունքների մասին» և ՖԿ-ի կողմից անցկացված մոնիթորինգի արդյունքների արձանագրումների միջև:*<br>ԳՖԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունից պարզվեց, որ «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի կողմից իրականացված մոնիթորինգի թերթիկներում բացակայում է տեղեկատվություն վարկառուներից 2-ի՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում գրանցված «Մ.Ա.Կ.» ԱՁ-ի և Լճաշեն համայնքի բնակիչ Հ.Ռ.-ի ստացած վարկերի | Վերացված չէ | Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել | Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մասով իրականացրած նպատակային մոնիթորինգի արդյունքների մասին: Արդյունքում՝ առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշմամբ հաստատված «Ծրագրի մոնիթորինգը» բաժնի 20-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի այն է՝ «Ֆինանսական կառույցը նախատեսում է հաշվետվություն ներկայացնել ԳՖԿ-ին և Նախարարությանը: Հաշվետվությունը պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն ծրագրի ընթացքի մասին, այդ թվում՝ տեղեկատվություն իրականացված նպատակային մոնիթորինգի արդյունքների մասին» և ՖԿ-ի կողմից անցկացված մոնիթորինգի արդյունքների արձանագրումների միջև: | | | |
| 4 | **1022-12004՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում**<br>*Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 24-րդ կետի պահանջների և վարկառուների ու բանկերի կնքված պայմանագրերի միջև:*<br>ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատվել է գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը: Նշված ծրագրի նպատակն է հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության ոլորտում զբաղված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը: Սուբսիդավորման ենթակա վարկերը պետք է նպատակաուղղվեն | Վերացված չէ | Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել | Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | բացառապես մթերվող գյուղատնտեսական հումքի արժեքի վճարմանը:<br><br>2021թ. երկրորդ եռամսյակում նշված ծրագրի շրջանակներում վճարվել է 979,818.70 հազ.դրամ գումար: Նշված գումարը վճարվել է նախորդ տարիներին ծրագրի ընթացքում տրամադրված վարկերի տոկոսագումարների վճարման համար: Նշենք, որ նշված գումարից 2021թ. կնքված նոր վարկային պայմանագրերի տոկոսադրույքների սուբսիդավորման գումարը առաջին կիսամյակում կազմել է 5,769.40 հազ. դրամ:<br><br>Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով նշված ծրագրի շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պարզվել է, որ երկրորդ եռամսյակում ներկայացվել է թվով 15 հայտ: Վարկերը տրամադրվել են 12,9-13,23 անվանական տոկոսադրույքներով:<br><br>ՀՀ կառավարության որոշման 24-րդ կետի համաձայն վարկերը տրամադրվում են առավելագույնը մեկ տարի մարման ժամկետով, առավելագույնը տարեկան 12 տոկոս անվանական տոկոսադրույքով: Վարկի մայր գումարի վճարման համար արտոնյալ ժամկետը պետք է սահմանվի վարկը տրամադրելու պահից հաշվարկելով առնվազն 2 ամսից, բայց ոչ ավելին քան 3 ամիս: | | | |
| 5 | **1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում վարկառուների և ֆերմերների միջև կնքված պայմանագրերի վերաբերյալ**<br><br>*Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ մասի պահանջների և կողմերի /վարկառուի ու ֆերմերների / կնքված* | Վերացված չէ | Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել | Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *պայմանագրերի միջև:*<br><br>ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշման 23-րդ կետի 2-րդ մասի համաձայն, կնքված պայմանագրերը պետք է ներառեն հետևյալ դրույթները՝<br><br>ա. գյուղացիական տնտեսությանը սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալական հիմունքներով օգտագործվող հողատարածքի (հողատարածքների) չափը, կամ տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, կամ վաճառվող գյուղատնտեսական կենդանիների տեսակը և գլխաքանակը կամ շինշիլայի գլխաքանակը,<br><br>բ. հումքի գնման քանակը, ժամկետները և գնման փաստացի կամ նվազագույն գինը, ըստ առանձին սորտերի կամ տեսակների,<br><br>գ. հումքի արժեքի վճարման կարգը և ժամկետները,<br><br>դ. կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը,<br><br>ե. անհաղթահարելի ուժի ազդեցությունը,<br><br>զ. պայմանագրի գործողության ժամկետը և դադարման հիմքերը,<br><br>է. վաճառողի բանկային հաշվի համարը: Հումքի գնման պայմանագրում վաճառողի բանկային հաշվի համարը նշված չլինելու դեպքում վարկառուն պետք է ՖԿ-ին որևէ այլ եղանակով տրամադրի վաճառողի բանկային հաշվի համարը,<br><br>ը. գյուղացիական տնտեսությանը հումքի արտադրության համար անհրաժեշտ կանխավճարի տրամադրման մասին (ըստ անհրաժեշտության). | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | **1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում իրականացվող մոնիթորինգի վերաբերյալ**<br>*Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետով սահմանված պահանջների մասով:*<br>Ծրագիրն ուղղված է Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տնտեսվարողներին ֆինանսական օժանդակության տրամադրմանը՝ նպատակային վարկերի տոկոսադրույքների սուփսիդավորման եղանակով: Ծրագիրն կարգավորվում է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի միջոցով.<br>Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետի համաձայն՝ միջոցառման մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը:<br>Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Նախարարության որևէ ստորաբաժանում լիազորված չէ մոնիթորինգն իրականացնելու համար, ինչպես նաև չի հաստատվել մոնիթորինգ իրականացնելու կարգ: Ծրագրի ողջ ընթացքում Նախարարության կողմից չի իրականցվել մոնիթորինգ: | Վերացված չէ | Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել | Տես կրկնվող կետ 6 |
| 7 | **1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում Նախարարության և ՖԿ-ների միջև կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման վերաբերյալ**<br>*Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 8.2 կետով* | Վերացված չէ | Հաշվեքննությա ն օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել | Տես կրկնվող կետ 7 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *սահմանված պահանջների մասով:*<br><br>Հաշվեքննության ընթացքում Նախարարությունը հաշվեքննողներին է տրամադրել հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածի Ծրագրի գանձապետական հաշվի քաղվածքը, ինչպես նաև Պայմանագրի 5.2 կետով սահմանված՝ Ֆինանսական կառույցների հայտերը և Պայմանագրի 8.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված Ֆինանսական կառույցների հաշվետվությունները:<br><br>Հաշվեքննողների կողմից ուսումնասիրվել և համադրվել են Ֆինանսական կառույցների կողմից ներկայացված 2021 թվականի հունվար-հունիս հաշվետու ամիսներն ընդգրկող հայտերը և հաշվետվությունները: Ինչպես նաև 2020 թվականի դեկտեմբեր ամսվա համար 2021 թվականի հունվար ամսին ներկայացված հայտերը, որի վճարումները ըստ Պայմանագրի իրականացվում են հայտերը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Այսպիսով հաշվեքննողների կողմից փաստացի ուսումնասիրվել են 2020 թվականի դեկտեմբեր, 2021 թվականի հունվար-մայիս ամիսների հայտերը, որոնց մասով Նախարարության կողմից կատարված վճարումները ներառում են հաշվեքննությամբ ընդգրկված ժամանակահատվածը:<br><br>Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Պայմանագրի 8.2 կետով սահմանվում է, որ Ֆինանսավորողը պարտավոր է ՖԿ-ի կողմից ներկայացված Հայտի ներկայացման պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում ՖԿ-ին փոխանցել սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարը, եթե Հայտը բավարարում է պահանջներին: Սակայն Հավելված 4-ով ներկայացված է Նախարարության կողմից կատարված վճարումները, որից պարզ է դառնում, որ Նախարարությունը ամբողջությամբ չի կատարել պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները՝ 1,249,486.37 գումարի չափով: | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8 | **1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակներում Նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ**<br><br>*Առկա է անհամապատասխանություն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի մասով, համաձայն որի, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:*<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի հունվարի 25-ի թիվ 30-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաստիքացուցակը, որում ՀՀ էկոնոմիկայի նախարարի համապատասխան հրամաններով 2021թ. առաջին եռամսյակում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Ըստ հրամանի՝ 25.01.2021թ. դրությամբ նախատեսվում է 459 հաստիքային միավոր, որից 112-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 24.4%: 01.06.2021թ. դրությամբ համաձայն նշված հրամանի հաստիքների թիվը կազմում է 390 միավոր, որից 87-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 22.3%: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ 01.06.2021թ. դրությամբ 87 թափուր հաստիքներից 69-ը 01.01.2021թ. դրությամբ նույնությամբ մնացել են թափուր: Նշենք նաև, որ մայիս ամսին հաստիքացուցակի փոփոխության հետևանքով կրճատված 69 հաստիքներից 19 հաստիքները եղել են նույնպես թափուր, որից 16 հաստիքները եղել են 01.01.2021թ. դրությամբ նույնությամբ մնացած թափուր հաստիքներ: | Վերացված չէ | Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել | Տես կրկնվող կետ 8 |
| 9 | **1022-12004 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի շրջանակներում Վարկառուների կողմից ներկայացված** | Վերացված չէ | Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի | Հարցը կուսումնասիրվի հաջորդ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **վարկերի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվությունների արժանահավատության վերաբերյալ / ձև N 1/**<br><br>Առկա է անհամապատասխանություն վարկառուների կողմից ներկայացված վարկերի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող փաստացի կենդանիների գլխաքանակների միջև:<br><br>Առկա է անհամապատասխանություն վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող փաստացի կենդանիների գլխաքանակների միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը ավելի է ներկայացվել շուրջ 776,305լ կաթ, 133,783.37 հազ.դրամ գումարով, այդ թվում՝ «Միլկաթ» ՍՊԸ-ն 138,000լ կաթ, 22,080.00 հազ. դրամ գումարի չափով, իսկ «Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ-ն՝ 638,305լ կաթ, 111,703.37 հազ. դրամ գումարի չափով: | | ներկայացվել | հաշվեքննության ընթացքում |
| 10 | **1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում ներկայացված հաշվետվության վերաբերյալ**<br><br>*Առկա է խողաթյուրում 1,249,486.37 հազ.դրամ հազ.դրամ գումարի չափով:*<br><br>Հաշվեքննողների կողմից ուսումնասիրվել և համադրվել են Ֆինանսական կառույցների կողմից ներկայացված 2021 թվականի հունվար-հունիս հաշվետու ամիսներն ընդգրկող հայտերը և հաշվետվությունները: Առկա է անհամապատասխանություն Նախարարության կողմից ներկայացված ֆինանսական կառույցների | Վերացված չէ | Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել | Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հայտերի և պետական բյուջեի կատարման փաստացի ծախսի միջև:<br>Առկա անհամապատասխանության հետևանքով առաջացել է խեխաթյուրում պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության փաստացի ծախսի ներկայացման մասով՝ 1,249,486.37 հազ.դրամ հազ.դրամ գումարի չափով: | | | |
| 11 | **1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակներում Նախարարության աշխատակիցների պարգևատրման վերաբերյալ**<br>*Առկա է խեղաթյուրում կապված Նախարության կողմից սխալ հոդվածի ներքո պարգևատրման ծախսերի ներկայացման հետ: Նշվածը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի հետ:*<br>2021թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցները պարգևատրվել են 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված գումարի խնայողություններից: Նշվածը հակասում է ՀՀ *ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի պահանջներին: Առկա է խեղաթյուրում 121,367.73 հազ.դրամի չափով:* | Վերացված չէ | Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել | Տես կրկնվող կետ 12 |